



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 13 ՅՈՒՆԻԱՐ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՍՈՂՈՄՈՆԻ 9

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՄԱՐԴՈՒՆ

Ո՞ր մարդը կրնայ իմանալ Աստուծոյ խորհուրդները,
եւ կամ ո՞վ կրնայ իսելամուտ ըլլալ, թէ ինչ կը կամենայ Տէրը.
որովհետեւ մահկանացուներուն մտածումները անստոյգ են,
իսկ մեր գիտելիքները՝ անհաստատ:
Եղծանելի մարմինը կը ծանրացնէ հոգին,
եւ հողեղէն այս յարկը բազմահոգ կը դարձնէ միտքը:
Ուստի մենք հազիւ թէ նկատենք երկրային բաները
եւ չարչարաններով կը գտնենք զայն:
Իսկ այն ինչ որ կը գտնուի երկնքի մէջ, ո՞վ կրնայ բնել,
եւ ո՞վ կրնայ գիտնալ քու խորհուրդներդ,
եթէ դուն իմաստութիւն չտաս,
եւ քու Սուրբ Հոգիդ չդրկես քու բարձրումներէդ:
Այսպէս է որ երկրայինները ուղղեցին իրենց շաւիղները
եւ սորվեցան այն ինչ որ հանելի է քեզի
եւ փրկուեցան քու իմաստութեամբդ:

ՇԱՐԱԿԱՆ ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ցանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՅԱԿՈԲ ԼԱԲԱՆԻՆ ՏՈՒՆԸ ԿԸ ՀԱՄՆԻ (29:1-14)

Յակոբ իր ճամբորդությունը կը շարունակէ եւ կը հասնի իր մօրեղբօր՝ Լաբանին փունը: Նախորդ, 28-րդ գլխուն մէջ փեսանք թէ ինչպէս Աստուած փեսիլքի մը ճամբով ցոյց փուա Յակոբին աստուած-պաշտութեան դաստիարակությունը, ինչպէս նաեւ վստահությունը ունենալու Աստուծոյ վրայ գալիք բոլոր դժուարություններուն դիմաց:

Հեղաքրքրականօրէն այս գլուխին մէջ Աստուած կ'ուզէ խրատել, ուղղել, սրբագրել Յակոբի թերությունները եւ իր առջեւ դնել այնպիսի երեւոյթներ, որպէսզի անով Յակոբ անդրադառնայ եւ սրբագրէ իր թերությունները:

Միւս կողմէ, կայ այն ճշմարտությունը, որ Հին Կրակարանեան այս դրուագները, նաեւ մեզի կը ներկայացնեն գալիք ճշմարտութեան շուքը, որպէս պարաստություն, նախաճաշակ, նախապարկե-րացում այն ճշմարտութեան, որ իր լրումը պիտի գտնէ Քրիստոսով:

Սկսելու համար, այս հատուածին մէջ մենք կը կարդանք հոր, հօրեր, հօրերուն մէկտեղումը, հորի բերնին քարը, ու մանաւանդ հորի մօտ հանդիպումը Յակոբի եւ Ռաբելի: Հօրերուն մէկտեղումը կը խորհրդանշէ փրկուածներուն, հաւաքացեալներուն մէկտեղումը: Հորը կը խորհրդանշէ գերեզմանը, վրայէն քարին գործումը՝ Քրիստոսի յարությունը, իսկ հորին ջուրը, որմէ պիտի խմեն, կենդանի ջուրը, կեանքի ջուրը, որ Քրիստոս խոստացաւ բոլոր անոնց, որոնք ծարաւի են:

Իսկ ամենահեղաքրքրական բաժինը, ոչ միայն Յակոբի պարագային, այլ անոր նախորդները եւս՝ օրինակ Իսահակի կնոջ պարագան՝ Ռեբեկան ջրհորի մօտ հանդիպեցաւ Աբրահամի ծառային: Հերեւաբար այս երեւոյթները պարահական չեն, այլ խորհրդանի եւ շուքը գալիք ճշմարտութեան, որ այս պարագային Քրիստոս իր հարսը պիտի գտնէ դարձեալ ջրհորի մօտ, եւ այս անգամ այդ ջրհորը նոյնինքն մկրտութեան աւագանն է, ուր հաւաքացեալները աւագանի մկրտութեամբ մաքրուելէ ետք կը սրանան սիրոյ եւ խաղաղութեան համբոյրը, դառնալու հարսը Քրիստոսի, ինչպէս Ռաբելի պարագային երբ Յակոբ խմցնելէ ետք ոչխարները համբուրեց Ռաբելին:

ՅԱԿՈԲ ԼԱԲԱՆԻՆ ԿԸ ԾԱՌԱՅԷ ՌԱԲԷԼԻՆ ԵՒ ԼԻԱՅԻՆ ՀԱՄԱՐ (29:15-30)

Գալով երկրորդ բաժնին, այստեղ ներկայացուած դրուագի ճամբով մեր միտքը կու գայ հետեւեալ հարցումը, թէ արդեօք Աստուած ինչո՞ւ կը թոյլարբէ որ Յակոբի կեանքին մէջ պարահին այնպիսի դէպքեր, որոնք զարմանք կրնան պարճառել, ոչ միայն Յակոբին, այլ նաեւ մեզմէ իրաքանցիւրին: Որովհետեւ յաճախ նաեւ մեր կեանքին մէջ եւս դէպքեր կը պարահին, որոնք զարմանք կը պարճառեն մեզի, եւ սակայն առանց անդրադառնալու թէ անոր երին կայ խորհուրդ մը, նպատակ մը, որով Աստուած կ'ուզէ մեզի բան մը սորվեցնել:

Յաճախ այնպէս մը կը կարծէք, որ մենք մեր կեանքին մէջ մենք շար խելացի ենք, ճարպիկ ենք, արթուն ենք, խաբող ենք, եւ սակայն մեր դիմաց կրնան ելլել այնպիսի մարդիկ, որոնք շար աւելին են քան մենք: Ահա այդպիսի երեւոյթի է որ կը հանդիպի Յակոբ երբ կը հասնի մօրեղբօր՝ Լաբանի փունը եւ անոր քով մնալէ եւ անոր ծառայելէ ետք:

Սկսելու համար, Յակոբ կ'ամուսնանայ երկու քոյրերու հետ Լիայի եւ Ռաբելի: Մի գուցէ փարօրի-նակ թուի, բայց անցեալի հասկացողութիւնն ու ըմբռնումը բազմակնութեան մի գուցէ ըլլար ցեղը շարցնելու հեռանկարով, ինչ որ սակայն Քրիստոսի ուսուցմամբ այդ բոլորը պիտի փոխուէին: Իսկ միւս կողմէ, երկու կիները պիտի խորհրդանշեն երկու ժողովուրդները՝ հրեայ եւ հեթանոս:

Յակոբ յանձն կ'առնէ ծառայել իր մօրեղբօրը՝ Լաբանին սերէ մղուած, ու անոր փոխարէն վարձար-րությունը ոչ նիւթական ակնկալութեամբ, այլ՝ մօրը պարուէրը յիշելով, որուն համար յանձն առած էր այս ճամբորդությունը, իրեն համար կին առնելու իր իսկ ազգականներէն: Յակոբ յանձն առաւ եօթը փարի ծառայելու Լաբանին, բայց այդ եօթը փարիները իրեն համար քանի մը օրուան չափ երեւցաւ (29:20): Բայց Լաբան խաբեց Յակոբին նախ փալով Լիան: Բայց Յակոբ երբեք փեղի չփուաւ, որով-հետեւ այնքան սիրեց Ռաբելին (Ռաբելը Լիայէն աւելի սիրեց), որ նոյնիսկ յանձն առաւ ուրիշ եօթ փարի մը եւս ծառայելու Լաբանին:

Այս դրուագով Աստուած ուզեց սորվեցնել Յակոբին, որպէսզի ան անդրադառնայ եւ անով սրբագրէ իր թերությունը: Միւս կողմէ, այս դրուագը նաեւ մեզի կը սորվեցնէ Յակոբի առաքինությունը, որմէ պէտք է սորվիլ նաեւ մենք մեր կեանքը ըստ այնմ դրսեւորելու: